

քայքայուած վանքը վաճառել ուրիշի, բայց Հայաստանցի հա-
րուստ ուխտաւոր մը նոյն պահուն Երուսաղէմ գտնուելով՝ վան-
քը և եկեղեցին նորոգեց և առատ նուէրներով ազատեց Միաբա-
նութիւնը տագնապէ մը (*Evagatorium*, I. էջ 265): Ք. Նաւի այս
վանքին նկատմամբ 1674ին գրի առած նկարագրութիւնը ստոյգ
կը մնայ իր լայն գիծերուն մէջ. «Քաղաքէն դուրս ելնելով՝
Դաւթի Դուռնէն՝ որ կը կոչուի նաև Սիոնի Դուռ, Կայրափայի
տան՝ որ մօտիկն է, այցելութիւն կը տրուի: Ան այժմ փոխուած
է և հոն շինուած է եկեղեցի մը՝ որ Հայոց ձեռքը կը գտնուի:
Զորս կամ հինգ աստիճաններէ հոն կարելի է իջնել. ցոյց կը
տրուի նարնջենի մը՝ որ, կ'ըսուի թէ տնկուած է այն տեղը ուր
Առաքեալը վառուած կրակէն կը տաքնար սպասուորներու հետ
և որոնց առջև ան ամէջաւ իր բարի Վարդապետին աշակերտը
ըլլալու: Աքաղաղին պատկերը քանդակուած է հարթ քարի մը
վրայ և ագուցուած է եկեղեցիին դիմացի պատին:

Եկեղեցին կը նայի արևելք, ինչպէս միւս եկեղեցիները զոր
ունին բոլոր արևելցիք: Ան շինուած է աւերակին վրայ այն ե-
կեղեցիին՝ զոր երբեմն կառուցած էր Ս. Հեղինէ, ի յիշատակ այն
տնօրինական գործոց որ տեղի ունեցան հոն...: Շատ մը նեղու-
թիւններէ վերջ մեր Տէրը հոն նեղ ու մթին բանտի մը մէջ դըր-
ուեցաւ: Հո'ն է յիշատակարանը, տեղը և պատկերը՝ սեղանին
մէկ կողմը:

Բանտը քառակուսի փոքրիկ սենեակ մ'է, ուր շինուած է
սեղան մը: Խիստ ցած ու նեղ դուռնէ մը կը մտցուի, և երկու
կամ երեք անձեր միայն հոն կրնան կենալ» (Տե՛ս Voyage Nou-
veau. էջ 100):

Ս. Փրկչի վանուց եկեղեցին փոքր սիրուն շէնք մ'է, առանց
սիւնի. մէկ սեղան միայն ունի, որուն վէմն է, ինչպէս յիշուե-
ցաւ Ս. Կերեզմանին Կաթարիջ Վեմը, զոր հրեշտակը շրջեց ու
վրան նստաւ (Մատթ. ԻԸ. 2): Այս կափարիչին վաւերականու-
թիւնը ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ կը հաստատեն և միշտ
ուխտի կու գան: Աւագ սեղանը նուիրուած է յակոբ Ս. Փրկչայ:
Երկրորդ Բանսի սեղանէն զատ, եկեղեցւոյն գաւթին մէջ կը գըտ-
նուի պատարագամատոյց սեղան մը յակոբ Ս. Զարչարանաց:

Աւագ սեղանի ետեւի կողմը կար պահարան մը որ ունէր սե-
ղան մը յակոբ Ս. Երրորդութեան: Այս պահարանին դուռը հին